



## ԿՐՈՆԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԽԵՐԱՑԻԿԱՆ.

ԹԻՒ Զ. — ՇՐՋԱՆ Ե.

1872

ՏԱՐԻ Ե. — ՑՈՒՆԻՑ 30

### Կ Ր Օ Ն Ա Կ Ա Ն

ՊՏՈՒԿ ՅԱՆԿԱԼԻ

Ա Ր Է

ՄԵԿԱՌԱԹՔԻՆ ԱՍԻՒՐԲ ԵՍ ՏԵՐ.,

Հ Ա Ր Ց Ւ Ն.

(Յ Ա Ր Ց Ւ Ն Հ Ա Ն Յ Ա Ն)

“Ո՛՛ ընդունեաց զէրանելի զնայրադիտն է լուսաբարեւ զմանիունն սընոյ Եկեղեց-ոյ ։ ։ ։”

Հազարապետ խորհրդոցն Աստուծոյ սրբազն առաքեալն Պօղոս՝ գեղեցիկ դասաւորութեամբ կարգէ զբանն, որ վասն ընտրելոցն՝ յասելն, “Օք զորս յառաջն ձանաչեր՝ յառաջազոյն և հրաւիրեաց. և զորս յառաջազոյն հրաւիրեաց, զնոսին և կոչեաց, և զորս կոչեացն, զնոսին և արդարացոյց. և զորս արդարացոյցն, զնոսին և փառաւորս արար, . . . յորում հինգ իր նկատի, նախ՝ ձանաչումն. երկրորդ՝ հրաւիրումն կամ հաճութիւն, զի ձանաչելովն զնա կարող կամաց իւրոց, հաճի ընդ այն. վասն որոյ ասաց “յառաջազոյն հրաւիրեաց,, կամ հաճեցաւ. երրորդ՝ կոչումն, զի հաճելովն կոչեաց ի սուրբ արդանդէ աւազանին յիւր որդեզրական վիճակ, յարդարութիւն, ի սրբութիւն և յառաջազիմութիւն սուրբ վարուց, ի լաւագոյն վիճակ կենաց: Չորրորդ՝ արդարացուցումն, զի կոչելովն յայտուիկ, ետ նմա զշնորհս հաւատոյ, յուսոյ, և սիրոյ, և զզջման. որովք կատարի առաջին արդարութիւնն, այս ինքն ի մեղաց, այլ և պարզելով զնորոգութիւն մտաց զնպաստս զօրաւորս ի պահել զԱստուածային պատուիրանս, զաճումն յԱս-

մբն. չորրորդ՝ արդարացուցումն. հինգերորդ՝ փառաւորութիւն: Վասինախընտրելն Աստուծոյ զոր ի փառս, և կամ ի շնորհս, նախ ձանաչէ զհաճութիւն կամաց նորա ընդ կամն իւր, ուստի ասաց յառաջն ձանաչեր. երկրորդ՝ հրաւիրումն կամ հաճութիւն, զի ձանաչելովն զնա կարող կամաց իւրոց, հաճի ընդ այն. վասն որոյ ասաց “յառաջազոյն հրաւիրեաց,, կամ հաճեցաւ. երրորդ՝ կոչումն, զի հաճելովն կոչեաց ի սուրբ արդանդէ աւազանին յիւր որդեզրական վիճակ, յարդարութիւն, ի սրբութիւն և յառաջազիմութիւն սուրբ վարուց, ի լաւագոյն վիճակ կենաց: Չորրորդ՝ արդարացուցումն, զի կոչելովն յայտուիկ, ետ նմա զշնորհս հաւատոյ, յուսոյ, և սիրոյ, և զզջման. որովք կատարի առաջին արդարութիւնն, այս ինքն ի մեղաց, այլ և պարզելով զնորոգութիւն մտաց զնպաստս զօրաւորս ի պահել զԱստուածային պատուիրանս, զաճումն յԱս-

տուածպաշտութեան՝ և յընտիր վարս, զարիութիւն ի հանդէս վշաաց, ուստի ասաց “արդարացոյց,,,: Եւ հինգերորդ՝ փառաւորութիւն, զի տեսանելով յայսուիկ հաստատեալ՝ փառաւորէ յանանց կեանս հոգւով և մարմնով ի փառս իւրց Աստուածութեան: Ըստ այսմ իմա ինձ և զհաստատելոցն ի շնորհաց բայց սոքա միջնորդութեամբ շնորհաց, իսկ նորա ան ընդմիջարար կոչեցեալք ի փառս. ըստ այսմ ընտրեաց Աստուած գերանելիս, վասն այնորիկ ասաց, “որ ընտրեաց,,,: Ընտրելոցն Աստուծոյ պատերազմ մեծ է ընդ աշխարհի, մարմնոյ, և սատանայի, ըստ առաքելական բանին՝ թէ, “կերակուր նորա ընտիրքն,,,: Զի ջան մեծ է սատանայի կորուսանել զմի ոք յընտրելոց, քան զբիւրաւորս յանընտրելոց. վասն որոյ զբոլոր ուժգնութիւն իւր գուն գործէ թափել ի վերայ նորա, զի յաղթեալ յաղթեսցէ և պարծեսցի ընդ չարութիւն իւր. ընդ որ սաստիկ պատերազմօք ընդդիմանան ընտրեալքն, զի յաղթեալ հալածեսցեն, և ամօթալից ի փախուստ ընկրկեսցեն, որով երևեսցին առաւելապէս սիրողք Աստուծոյ, և կատարողք կամաց նորա, որով և վարձուցն ակն կալեալ թեան՝ երանութեանն յԱստուծոյ. զոր պատրաստեալ պահի նոցայամենարի արարչէն յըշտեմարանն արքայութեան երկնից. ըստ այսմ ապա յարէ և ասէ, “երանելի,,,: Ո՛չ ոք կարէ ընկալնուլ զփոխարէնն գործեցեալ առաքինական վտատակոց՝ մինչէ ի մարմնի, այլ դանձեալ ունի ի յերկինս, միւսանգամ գալստեանն Աստուծոյ. վասն զի վարձք առաքինական գործոց՝ հայեցողական տե-

սութիւն է Աստուածային. և ոչ ոք կարէ տեսանել զնա հայեցողական տեսութեամբ ի կեանս յայս, որպէս ասաց Աստուած Մովսէսի “ո՛չ ոք կարէ տեսանել զերես իմ՝ և ապրի,,,: ուր ասէ մեծն Վարդան, Մեկ. Ելից. գլ. ԼԳ. Ո՛չ թէ չկամիմ ասէ, այլ զու ոչ կարես. և զի՞մի տրտմեսցի պակաս գոլով, ասէ, և ոչ այլ ոք մարդ այժմու կենօքս և յաշխարհի,,:

Եւ Տէրն մեր ասէ, “Երբեք ո՛չ եթէ Հայր ուրուք տեսեալ իցէ, եթէ ո՛չ որ ին յԱստուծոյ, նա ետես զայր,,,: Եւ Յով. Հաննէս աւետարանին զրէ. Ա. 98. “զԱստուած ո՛չ ոք ետես երրէք, բայց Միածին Որդի, որ է ի ծոց Հօր. նա պատմեաց մեզ,,,: Եւ դարձեալ Ա. թղթ. Դ. 12. “զԱստուած ուրուք երրէք չիք տեսեալ,,,: Եւ Պօղոս զրէ Տիմ. գլ. Օ. 16. “Ո՛չ ոք ետես ի մարդկանէ. և ոչ տեսանել կարող է,,,: ուր ասէ մեկնիչն, “զյայտնի տեսութիւն էութեաննորա ո՛չ ոք ի մարդկանէ ընկալու, և ոչ իսկ կարող է ոք այսպէս տեսանել, ցորչափ ի մահկանացու կեանս է. կարդ նախախնամութեանն Աստուծոյ ի հանգերձեալ յանմահ կեանս պահեաց զայն տեսութիւն՝ շնորհօք միայն, և ո՛չ բանաւոր մտաց կորովութեամբ ո՛չ Բայց աստանօր կարողոս Պիլուարդ ասէ յիւրում Աստուծաբանութեան, ի մեջ բերեալ զաեսիլս սրբոցն Պօղոսի և Մովսէսի. “յիրաւի եթէ ո՛չ էր տեսեալ սուրբն Պօղոս զէութիւնն Աստուծոյ, զիսորհուրդը Երրորդութեան և մարդկութեան, այլ միայն հաւատովն էր ծանուցեալ, կարէր զնոցանէ ճառել,,,: և զինի ասէ, հաստատի բանիւ թռովմացի, և սրբոյն Օգոս-

տինոսի. որպէս եղել Մովսէս առաջին վարդապետ Հրեփից, նոյնապէս և Պօղոս եղեւ առաջին վարդապետ Հեթանոսաց, ապա պատշաճ էր տեսանել նոցա զաստուածարին էռութիւնն, և խորհրդոցն լինել աշխանտես վկայ. որով բարեւոք և հաստատուն ուսուացեն զեթեայս և զեթանոսոս,, : Եւ ներհակ այսմ ասէ Առուգովեկոս Հարերդ Աստուածային ստոր. գլ. Ե. Խնդ. Գ. “ Եսիցես, ասէ, սուրբն Պօղոս յափշտակեցաւ ի դրախտն մինչեւ յերրորդ յերկինս, իսկ Մովսէսի խոստացաւ Աստուած ցուցանել զինքնարուն բարին, և խօսեցաւ ընդ նմա դէմ յանդիման, և ոչ ձեռվք և օրինակօք. ապա հայեցողական տեսութիւն շնորհեցաւ նոցա,, :

Պատասխանեմ, ասէ. յայտնի և մեկն վկայութեան անմարթ է դիմադրել զինքնարինս, քանզի նախ չէ յայտ, թէ զի՞նչ իցէ երկրորդ երկինքն՝ յոր յափշտակեցաւ առաքեալն. և զի՞նչ անդ լուեաւ իցէ. երկրորդ՝ յայտնապէս ասաց Աստուած Մովսէսի, “ Ո՛չ կարես տեսանել. զի ոչ տեսանէ մարդ զերեսս իմ, և ապրի,, . ապա Մովսէս ոչ ետես զինքնարուն բարին յիւրում տեսակի, այլ ի մարդկային պառկերի, յորում Աստուած՝ կամ մանաւանդ հրեշտակն փոխանորդ Աստուածոյ. որպէս և գրեալ է Գործոց Ե. 37. 38. “ երևեր Մովսէսի՝ և խօսէր ընդ նմա՝ որպէս բարեկամ ընդ բարեկամի՝ բերան ի բերան, և դէմ յանդիման, այլ ոչ երազովք և նմանութեամբք, և նսեմ օրինակօք, որպէս հրով, ամնզովք ևլն,, : Աւրեմն վարձս առաքինութեան ոչ կարողացաւ և կարող է ընկալնուլ մինչեռ է ի մարմնի, և յանջատմանն ես,

որպէս ասէ երանելին Պօղոս Բ. Տիմ. Պ. 8. “ Եյսուհետեւ կայ մնայ ինձ արդարութեան զսակն, զոր հատուացէ յաւուրն յայնմիկ արդար դատաւորն, և ոչ միայն ինձ, այլ և այնոցիկ ոյք սիրեցին զյայտնութիւն նորա,, . ուր ասէ մեկնիչն, յաւուր յայնմիկ, ի մեծի և ի յեաին աւուր դատաստանի բովանդակ լրութեամբ ըստ հոգւոյ և ըստ մարմնոյ. իսկ մինչ է ի մարմնի տեսանելով զԱստուած վերացելաբար, վայելէ զառհաւատչեայն երանութիւն վարուցն առաքինսական վաստակոց, և ոչ լինի երանելով՝ այլ երանել՝ որպէս հրաշալին Յակօք մինչ էր ի մարմնի. վասն այսորիկ գեղեցիկ ասաց “ Երանելի,, : Երանելութիւնս երրակի նկատի, յԱստուածոյ, ի հրեշտակաց, և ի մարդկանէ. որ հայի յերրեակ ժամանակս՝ յանցեալոն, ի ներկայն, և յապանին, որ նոյն է յաւիտեան՝ և յաւիտեանս յաւիտենից. ի մարմնի՝ կատարելապէս ի մարդկանէ. յանջատմանն՝ ի հրեշտակաց և ի մարդկանէ. ի միաւորմանն՝ յԱստուածոյ, ի հրեշտակաց, և յարդար անձանց. հրեշտակքն ըստ բանի մտաց և գործոց. արդարքն ըստ բանի շրթանց և գործոց: իսկ Աստուած շնորհական տեսութեամբ իւրով, որ է բուն իսկ երանութիւն սրբոց, և արդարոց, զայսոսիկ նկատելով երգէ ցնծութեամբ յասելն “ զերանելի հայրապետն,, . ապա կամի անել, ովլ լուսաւորեալ որդիք նորոյ Ախօնի ներբողական ձայնիւ բարձր արարեք զԵրիստոս Աստուածն յաւիտենական օրհներդութեամբ, որ ընտրեաց զսուրբս և զերանելին ի մարդկանէ և ի հրեշտակաց, և զերանելին յիւրմէ, յանանց կեանս՝ առ. ի լուսազարդել

զմեղ զմանկունս սուրբ եկեղեցւոյ, մեղ-  
րածորան վարդապետութեամբն իւրով,   
և հրեշտակային վարուց օրինակաւն. վասն  
որոյ յարէ ասելով ‘ի լուսաւորել զման-  
կունս սրբոյ եկեղեցւոյ,,. ըստ Դիոնէ-  
սիոսի գործ հրեշտակաց է մաքրել լուսա-  
ւորել, և կատարելագործել. և ըստ Ալ-  
պերտի՝ երիւք իմանամբ զեր իմն, տեսա-  
կօք՝ որով ձանաշեցուք, լոյս՝ յորում  
ձանաշին տեսակքն, և զիմաւորութիւն,  
որով գարձուցանեմք զմեղ յիմացութիւն  
ի վերայ տեսակին: Երդ՝ լուսաւորէ հրեշ-  
տակն զիմացականս մեր զարթուցանելով  
և պատրաստելով և զառ ի Ճառուծոյ  
ըստ առ մեղ բերելով: Դարձեալ փոփոխե-  
լով զտեսակս յերեակայութեան, և բա-  
ղդաբելով և տարորոշելով, ըստ պահան-  
ջելոյ իրին՝ յինքենէ յայտնեցելով. դար-  
ձեալ ձառագայթելով ի վերայ այնր տե-  
սակաց զլոյս իմացման իւրոյ, զի շարժես-  
ցեն զիմացականս մեր: Եւ ևս զարթու-  
ցանելով զդիտաւորութիւն հոգւոյն շարժ-  
մամբ իմն, զի դարձուցէ զինքն ի վերայ  
երեակայմանց այնց տեսակաց, զորս կամի  
հրեշտակն տալ մեղ իմանալ. մաքրեն ի  
բաց մերժելով զերե մունս որք արդելուն  
ի մեղ զլուսաւորութիւնն՝ զոր ինքեանք  
առնելոց են ի մեղ. ուստի զերիս զայսո-  
սիկ մերժեն՝ զտզիտութիւն, զմառախուզ  
երեակայութեան, և զսուտ կարծիս բնա-  
կան առաքինութեանց որք ընդ գէմ յայտ-  
նութեան հաւատոյ, և կատարելագործեն  
այս ինքն յառաջացուցանեն առ բարին:  
Եւ զի առաջնորդք, և եպիսկոպոսունք  
կամ քահանայք են նմանութեամբ հրեշ-  
տակք, յայտնապէս տեսանի ի Յայտնու-  
թեան զլ. Ծ. ուր խօսի զերիցանց՝ Եւ-

պիսկսպոսաց՝ առաջնորդաց ասելով ‘առ  
հրեշտակն Եփեսացւոց զրեան որ էր սուրբն  
Տիմոթէոս աշակերտ սրբոյն Պօղոսի. առ  
հրեշտակն Օմիւռնիոյ՝ որ էր սուրբն Պօ-  
ղեկարպոս. առ հրեշտակն Թնեատրիոյ՝ որ  
էր սուրբն Կարպոս. և այլ ևս առ երիս  
առաջնորդս՝ Աարտենտիոյ, Փլատէլգեն-  
սիոյ, և Լաւողիկեայ: Եւ Մաղաքիայիւ-  
ասէ, Ծ. 7. ‘բերան քահանային զգուշա-  
ցին զիտութեան, զի հրեշտակ Տետոն  
Սմենակալի է,,. ուր ասէ Կուռնել Մեկ.  
Մադ. անդ. ‘զեսպան ի մէջ մարդկանց  
և Վստուծոյ,,. զի զօրէնս յԵստուծոյ  
ուսեալ առ մարդիկ բերէ իրը մունետիկ,  
զի զոր ինչ լսէ ի թագաւորէն՝ զայն ար-  
տաբերէ, և զկամն թագաւորին պարզա-  
պէս յայտնէ, զի ի նմանէ զու ինչ յաւե-  
լուկ կամ բառնալ կարէ, զի ոչ է ինքեան  
բանն, այլ Վստուծոյ: Եյսպէս և քահա-  
նայն, բայց ինքն միայն զործիք և միջ-  
նորդք, և փոխարերապէս, զաղաշանս ժո-  
ղովրդեան առ Վստուծ մատուցանէ, հա-  
սուցանէ: Երկրորդ՝ զի որպէս հրեշտակք  
սպասաւոր առաջի Վստուծոյ, այսպէս և  
քահանայն. և որպէս հրեշտակք միշտ ան-  
դադար զովին զԵստուծ և սաղմուսն,  
այսպէս և պարտի քահանային. և թէ հե-  
տեիլ պարտին հրեշտակաց՝ Ճմարտու-  
թեան, պարզութեան, ողջախոհութեան,  
մաքրութեան, զի իրը և հրեշտակք են ի  
մէջ մարդկանց, փարդապետ ի մէջ մարդ-  
կանց, հովել ի մէջ կենդանեաց. զի քա-  
հանայքն սրբագործութեամբ, և ձեռնա-  
դրութեամբ են հրեշտակ, ուով զմեծա-  
գոյն իշխանութիւնն՝ քան զոր ունին հր-  
եշտակք, յԵստուծոյ ընկալան: Երեք  
են պաշտօն հրեշտակաց՝ այս ինքն մաքրել

լուսաւորել և կատարել, այսպէս և քահանային։ Բայ այսմ և երջանիկ հայրապետու Յակօբ գոլով քաւող ժողովրդեանն և առաջնորդ Մծրին մեծահոչակ քաղաքին, եր հրեշտակ ի մէջ նոցա. մաքրէր զնոսա յաղտոյ մեղաց և յաղանդոց հերձուածողաց, և հեթանոսական կռամբութեանց. լուսաւորէր հրաշալի վարդապետութեամբ և սքանչելի վարուց օրինակաւ, և կատարելագործեր վերածելով զնոսա յուղեղ պողոտայն երկնից արքայութեանն. ուսուցանելով և վարուք, պարգևէր նոցա կրկին թեք առ ի վերասլանալ յօթեանս բարձրութեան երկնից՝ տեսական և գործնական առաքինութեամբ. և զի՞ վասն այսորիկ ընտրեաց Աստուածզա, վասն այսորիկ ասաց “ի լուսաւորել զմանկունս սուրբ եկեղեցւոյ ,,: :

Լուսաւորել չորեքինն նկատի. լուսաւորիլ յայլմէ, և լուսաւորել զայլս. ոչ լուսաւորել զայլս, լուսաւորիլ յայլմէ, ոչ լուսաւորիլ յայլմէ, լուսաւորել զայլս, ոչ լուսաւորել զայլս, և ոչ լուսաւորիլ յայլմէ։ Առաջննն գովելագոյն. երկրորդն ըստիմբք գովելի. երրորդն՝ ամենագովելի. իսկ չորրորդն ամենաեին խոսելի։ Բայ առաջնոյն յատուկ է հրեշտակաց, և ուսուցիչ վարդապետաց. ըստ երկրորդին՝ ոմանց. ըստ երրորդին՝ միայն Աստուածոյ. իսկ չորրորդ՝ սատանայի, և նորին կամարացն։

Բայ գովելագոյն կերպին ասացաւ “լուսաւորել,, , զի ըստ օրինակի հրեշտակաց զարթնոյր լուսով իմաստութեան առ ի յԱստուածոյ, և զարթուցանէր զմանկունս Աիօնի լուսով գիտութեան. պատրաստէր զկամն իւր առ այն, և զնոյն առնէր կա-

մացն այլոց, սլանայր բարձրանայր յըստորայնոցս ի տեսութիւն տնտեսութեան ամենասպարզեողին երախտեաց, և զնոյն յուշ ածէր մանկանցն ուխտի, և ժողովրդականիսից՝ փոփոխէր զտեսակս մտաց մերոց, ի մեծէն առ մեծամեծս վերառեալ, և զնոյնս առնել յորդորէր զամենեսին, զինքեան պարզեեալն ի Հոգւոյն սրբոյ բանից՝ աստուածապետական շնորհաց, առնոյն շարժէր զիմացականս ի վերայ այնց պարզեեալ բանից, Ճառադայթելով զյոյս իմացման իւրոյ յատենի վարդապետութեան. ըստ այսմ կերպի իմա ինձ զմաքրելն և զկատարելագործելն, վասն որոյ երգեաց ասելով “իլուսաւորել զմանկունը ,,: Ենձինք եկեղեցականաց առ հասարակ ի լեզու զրոց կոչին ուխտին մանկունք, ըստ այնմ ի Ճամագիրք, “վասն վարդապետաց՝ քահանա ոյից՝ սարկաւագաց՝ դպրաց և ամենայն ուխտի մանկանց եկեղեցւոյ ,,: Բայ այսմ կոչին և առաջի թագաւորին կացեալ . յսպասաւորութիւն, որպէս երեք մանկունքն յապարանս թագաւորին “Եաբուգովոնոսորայ, զի ըստ Կուռնելեայ Ալֆ. մեկն. Գան. գլ. Գ. յորժամ անկան ի հնոյն էին յիսուն և եօթն ամաց, զի էին վերակացուք բոլոր բարելոնի. և այս ասէ չէ գործ մանկանց։ Եւ պատմագիրն յաղագս եօթն մանկանց ննջողաց Երփեսոսի զրէ ծանօթ. վարուց եօթն ննջման մանկանց, Ա։ Խակ մանկունք կոչին եօթն ննջողքն՝ ոչ այնչափ վասն տղայական հասակին, զի ոմանք ի նոսապատանիք էին, և ոմանք երիտասարդք, որչափ վասն զի էին պալատական պաշտօնեայք կամ զինուորեալք ի սպաս արքունական, վասն որոյ ե. Փոտ կոչէ միանդա-

մայն մանկունս և պատրիկս. որպէս և յաւետարանին՝ ծառայ հարիւրապետին մանուկ կոչի Յունական ոճով : Եւ ի գիրս թագաւորութեանց ասի, « յարիցին մանկաին և խաղացն , . և ի Պատարագաւ մատուցին զօրք առհասարակ թագաւորաց քրիստոնէից կոչին զինուորեալ մանկունք : Խսկ սուրբ եկեղեցի գոյով տուն և ապարան երկնից թագաւորին Եստուծոյ՝ որ հանապազ աներեւութարար բազմեալ կայ ի սրբութեան սեղանին, առաջիկայք կոչին մանկունք ուխտի նոցա նուիրեալք, զի որոշեսցին յերկրաւոր թագաւորացն պաշտօնեայ մանկանց : Բայց աստանօր ոչ եկեղեցական մանկանց և եթի խոսի, այլ զամենայն քրիստոնէից՝ որք են, և կոչին մանկունք, ըստ այնմ, « խնդայ յոյժ դուս տըր լուսոյ մայր սուրբ կաթուղիկէ մանկամիք քո միօն , : Միանգամայն և զօրք ասին ընդ դէմ աներեւոյթ թշնամւոյն մարտուցեալք, ընդ դէմ աշխարհի և մարմնոյ. որպէս Պօլոս գրէ « զէն զինու որութեան մերոյ ոչ է մարմնաւոր, այլ զօրաւոր յԵստուծոյ՝ առ ի քակելոյ զամուրըն , . ուր ասէ մեկնիչն, իշխանք, թագաւորք, բանակք դիւաց՝ աղանդք ազգի ազդիք, բռնութիւնք ախտից, ընդդիմարտ սովորութիւնք, և որպէս թէ պաշտօն աւետարանին՝ զոր վարեմքս, պատերազմ է սաստիկ առ աներեւոյթ թշնամիսի մարդկանէ և ի դիւաց, նիզակակից մեզ, մանաւանդ և զօրավար առ ի յաղթութիւն ոչ ոք ունելով, բայց միայն զԵստուծած. ուստի և ասացաւ « զինուորեալ եկեղեցի , . և զինուորեալ մանկունք ոըրոյ եկեղեցւոյ զժողովս հաւատացելոց անուանեաց և զերջանիկ այր մեր դորո-

վագութ լուսաւորող մանկանց եկեղեցւոյ. և զի մանկունք ասելով մի՛ մարմնական թագաւորացն իմասցուք, որոշելով ինոցանէ, ևս և ի հեթանոսացն՝ յարէ և ասէ « սուրբ եկեղեցւոյ , : Ա՛շմարիտ եկեղեցւոյ է յատկութիւն, լինել սուրբ, միմիայն, կաթուղիկէ, առաքելական, որպէս երգէ սուրբ Եկեղեցի յամենայն յաւուր յասելն, « վասն Միայնոյ՝ Ոուրբ՝ Կաթուղիկէ և Եռաքելական Եկեղեցւոյ , . և ի Հանգանակին ասի, « Հաւատամք ի միմիայն Ընդհանրական և Եռաքելական Եկեղեցի , . և թէ « նզավէ կաթուղիկէ և առաքելական սուրբ եկեղեցի , . քանզի ասէ սուրբ՝ այս ինքն անմասն յամենայն պըղծութենէ հերձուածողական և հեթանոսական սերմանացանութեան, և զի ուսուցանէ պատուիրէ և պահէ որ ինչ է սուրբ, և կառավարի ի Հոգեոյն սրբոյ, և զայս առ յանկսար վախճան և սուրբ, ըստ այսմթուի և սաստել առաքելոյս զպունկեալ Կունթացին յասելն, « մատնեցի զմարմին նորա սատանայի՝ զի հոգին ապրեսցի յաւուր Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի , . այս ինքն Հոգին սուրբ որ կառավարէ զեկեղեցին, մի՛ լքանիցի, ըստ այնմ « մի արտմեցուցանէք զհոգին, այլ նովին կացցէ և մնասցէ մինչ ի դատաստան , : Վ ասն որոյ ասէ և առաքեալն Պետրս, 1. Պետրոս. Բ. 9. « դուք ազգ էք ընտիր քահանայութիւն, թագաւորութիւն, ազգ սուրբ, ժողովուրդ սեփհական , : Միմիայն զի եկեղեցին՝ եթէ միութեամբ, եթէ բանիւ վարդապետութեան, և կառավարութեամբ, ընդ միավ գերագոյն հովուաւ կայանայ որ է Քրիստոս, ըստ այնմ « Ես եմ Հովիւ քաջ , . և թէ « այլ ևս ոչ-

խարք են իմ՝ որք ոչ են յայսմ գաւթէ, և զնոսա պարտ է ինձ ածել այսր. և եղիցին մի հօտ՝ և մի հովիւ, . և ըստ Պօղոսի « մի մարմին և մի հողի, և որպէս կոչեցայք ի մի յոյս կոչման ձերոյ. մի Տէր՝ մի հաւատ, մի մկրտութիւն,, . ուր ասէ և մեկնիչն « ամենեցուն մեր մի դաւանութիւն է հաւատոյ,, : Եղին կանօն և վարդապետութիւն ի հաւատալ և ի գործել ըստ կոչման մերոյ, առաջնոց աստուածապաշտից և այժմուց նոյն դաւանութիւն յայտնի կամ լռելեայն. եթէ այլ և այլ ձշմարտութիւնք առաջի դնին առ ի հաւատալ՝ բայց ամենեցուն մի է սկիզբն, և մի առարկայ, ոչ զայլ ինչ դաւանի Եփեսացի քրիստոնեայն և զայլ Արքնթացին, ոչ այլ դաւանութիւն է առաջնորդին կամ իշխանին, և այլ ժողովրդականին կամ ռամկին: Երրորդ՝ « կաթուզիկէ,, . զի նախ առհասարակ հաւատացեալք անուանին քրիստոնեայ, որպէս ասէ Պակիանոս. « քրիստոնեայ է իմ անուն, և ընդհանրական է մանկունս, այսու անուանիմ, և վասն այսր յայտնի լինիմ,, . ըստ սմին ասէ և սուրբն Աիւրեղ, ակնարկելով զաեղին. վասն զի ընդ ամենայն աշխարհ սփռեցաւ՝ ի ծագաց երկրի մինչև ի ծագս նորուն: Երրորդ՝ ըստ ժամանակին, զի ի սկզբանէ աշխարհի այս ինքն յԱբրէ մինչև ի յետին ընտրեալսն էր և է նոյն հաւատ տարածեալ, թէպէտ յառաջնու լռելեայն: Չորրորդ՝ « Եռաքելական,, . զի զորինչ բան հաւատոյ տարածեսցին ի լսելիս հաւատացելոց, զայնս պահողքն հաւատարմութեամբ՝ ասին առաքելական, երկրորդ՝ հովիւքն իջեալք անընդհատ յաջորդութեամբ յառաքելոց անտի՝ ասին

Եռաքելական: Եպա սուրբ ասելով՝ զերիս զայսոսիկ ևս ծանօցյ լռելեայն, որպէս թէ ասէր « ոչ միայն զմարմնական թագաւորութեանց մանկանց, ընդ մարմնական միայն մարտուցելոց, այլ և ոչ զիերեսիովտացն, զի նոքա որք չունին հազորդակցութիւն ընդ զինուորեալ եկեղեցիս հաւատավը և գաւանութեամբք, չունին և մասն հազորդութեան ի նորին շընորհաց, որովք և ընդ յաղթականացն պարակցութիւն, և են արտաքոյ յերկրորդ տապասէն երկրորդին Եղիք. այլ զուզափառութեամբ փայլեալ մանկանցն առեմ, և զորդւոց մօրն լուսոյ մի միայն՝ սուրբ՝ կաթուզիկէ և առաքելական Եկեղեցւոյ, որոց վասն յատկապէս ընտրեաց Խսուածզուրբն և զոքանչելի հայրապետն առ ի լուսաւորել զնոսա բանիւք և վարուք վարդապետութեան. վասն որոյ ասաց « սուրբ եկեղեցւոյ,, . բառս Եկեղեցի յԱբրայականէն առ մեզ թարգմանեալ, ժողովարան մանկանց նշանակէ. իսկ Ոենիկօկայն ըստ քննութեան Օգոստինոսի՝ ժողովարան մանկանց և անբանից. վասն արօրիկ ի նորումա՝ տեղւոյ աղօթից՝ Եկեղեցի անուն տամք, և ոչ Ոենիկօկայ՝ ըստ հնոյն. և ըստ Եկրասի Ալայեցւոյ, Բնդհանրական, յերես 258 « քանզի ասէ եկեղեցին յԱբրայեցւոյն ի մեզ ժողովուրդ թարգմանի. ըստ սմին անուանն կոչի և ժողովարանն, զի է շինեալ ստուգապէս տուն Խսուածոյ յաղագս պատարագելոյ Արդւոյն Խսուածոյ ի նմա. և ըստ այսմ յերկուս բաժանի, նիւթական, և տեսական. նիւթականն շինեալն ի քարանց և ի հողաց, որ և համանունարալ ասի եկեղեցի. իսկ տեսականն ժողովք:

հաւատացելոց ի օրիստոս, և ասա եթէ զոհսական, և եթէ զնիւթական եկեղեցւոյ ասէ, յոյր արգանդէ ի սուրբ աւագանէն վերստին ծնանին սուրբ մլրտութեամբ, յորդեգրութիւն աօրն երկնաւորի. վասն որս որդիք Մօր լուսոյ անուանին և են. և նորին օրինադրութեանն հլու և պաշտպանիչք, ըստ որոյ և Պօղոս ասէ, ‘որ է միութիւն և հաստատութիւն ծշմարտութեան,,’ այս ինքն հաստատպահող դշմարտութիւնն ի ձեռն մանկանց իւրոց. ըստ այսմ կարօտին օգնականութեան սրբոց, և նոքա յօժարին առայս. վասն այսորիկ ասաց ‘ի լուսաւորել զմանկունս սուրբ եկեղեցւոյ,,’ վասն այսորիկ ընտրեաց Աստուած զսուրբն զի լուսաւորեսցէ զմանկունս եկեղեցւոյ բազմապատիկ իմաստից բանիւք մինչ էրն ի մարմնի, զորս ընկալաւ յառաջադրութենէ սուրբ եկեղեցւոյ՝ և յԱստուածոյ, կաղնոցա յանրիծ հաւատս և յարդար վարս Աստուածպաշտութեամբ. և յետ հրաժարելոյն յաստեացմ՝ անհետադարձ բարեիսութեամբ իւրով օգնական հասանելով ի թիկունս նոցա, որով կարողասցին զդիմի հարկանել յաւուր չարեաց առ ի պաշտպանել զծնողս և զմնուցիս իւրեանց զսուրբ եկեղեցիս ի զրանց դժոխոց՝ այս ինքն ի բռնութենէ անհաւատից, յառարկութեանց հերեսիովաց, և նոցին պետաց, յարձակմանէ զիւաց, և ի ծոց նորին գումարելովք գումարեսցի ի վերին յաղթական եկեղեցւոջ, որ ի կամարս լուսեղինս. և զայս՝ մինչդեռ էր ի մարմնի, յայտ առնէր զգալապէս. ուստի կցէ ընդնախակարգեալ բանս՝ իրբե քաղցրախօս լուսնակ, յասել:

(Նորոշումնելու)

## Պ Ա Տ Մ Ա Կ Ա Ն

ՀՆՈՒԹԻՒՆՔ ՀԱՅՐԵՆԵՍՑ.

(Նորոշումնելու):

ԱՐԵՆԱԿԱՊԱՆ ԿՐԵԱԿՅԵ.

Տխուր անցից յիշատակները ապագայից սրտից մէջ զարթեցնող հնութեան նշանը է այս մենաստան կիսաւեր. Տաճարի շնչքն քառանկիւնի. ներքին լայնութիւնն և երկայնութիւնն ութն քայլամբողջ որմունքը, սիւնքն և կաթուղիկն աղիւսակերտ. կաթուղիկէ տաճարին, որ հաստատուած է եղել երկու արևմտեան սեանց և երկու արևելեան կիսաւեանց վերայ՝ կործանուած է. թողլվ միայն շրջապատ որմունքն՝ մէջ եկեղեցւոյն զարդարուած է ազգի ազգի քարաքանգակ և աղիւսակապ խորշերով կամ պատուհաններով. ունի երեք սեղան, մին մեծ, որոց վեմքարինքն կից յորմն արևելեան, ունի հինգ դուռն, երեքն արևմտեան, միջինն աւագ դուռն բարձր և լայն. եկեղեցւոյ մէջ տեղը կանգնած կայ կոփածոց միապաղադղ քարէ սիւնաձև արձան. նոյնպիսի սիւն մի ևս արևմտեան դրան հանդէպ արտաքոյ: Տաճարի մէջ կան երկու գերեզմանք, արևմտեան մեծ դրան կից գերեզմանաքարերի վրայ թէւ ամենաեն զիր չի նշմարուի, բայց ես հաւանած եմ կարծել թէ սոցա մինն Բարգուղիմէոս Խպիսկոպոսին պիտի լինի, միւսն ուրիշ մէկին, որք ի նշան յարգանաց և երախտագիտութեան այս տեղ ամփոփուած կլինին. հարաւային կողմէն տաճարին կցուած է եղել թաղակապ և աղիւսակերտ վառա-